ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 18 >> հունիսի 2013թվականի N 69 -Ա

ԳՅՈՒՄՐՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. «Գյումրին՝ 2013 թվականի ԱՊՀ համագործակցության մշակութային մայրաքաղաք» միջպետական ծրագրի իրականացման համար Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2013 թվականի բյուջեի 8/6/01 գործառնական դասակարգման նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին(4819) տնտեսագիտական դասակարգման հոդվածից 17 200.0(տասնյոթ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ գումար հատկացնել Գյումրու Զարգացման Հիմնադրամին:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետով առաջին կիսամյակում Գյումրու Զարգացման Հիմնադրամին հատկացված գումարի շրջանակներում հիմնադրամի կողմից ապրանքների և ծառայությունների ձեռքբերումն իրականացվում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով նախատեսված բանակցային ընթացակարգով:

Կողմ (11)	**Դեմ(0)**	**Ձեռնպահ(0)**
Ա.Բաղրամյան_____		
Լ.Բարսեղյան _____		
Մ.Գաբոյան _____		
Ա.Գրիգորյան_____		

Վ.Եդիգարյան _____

Գ.Թաթարյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է.Մկրտչյան _____

Մ.Սահակյան _____

Ա.Վարդանյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ